ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 2-ԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» ծրագիրը (ասյուհետ՝ Ծրագիր), անհրաժեշտ է ավագանու համաձայնությունը Ծրագրի Բաղադրիչ 2-ին մասնակցելու համար Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ծրագրի նպատակն է համայնքային ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների բարելավումն՝ ի նպաստ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման:

Ծրագրին մասնակցելու համար նախաձեռնող խումբ ձևավորելու նպատակով համայնքապետարանի պաշտոնական կայքում 21.02.2022թ. տեղադրվել է հայտարարություն՝ խմբի կազմին անդամակցելու վերաբերյալ: Նախաձեռնող խմբի կազմը ձևավորվել է համայնքապետարանի աշխատակիցներից և խմբին անդամակցելու համար համայնքապետարան դիմած բնակիչներից: Ծրագրի իրականացման ընթացքում նախաձեռնող խումբը հանդես է գալու համայնքի անունից:

04.03.2022 թ. համայնքապետարանում տեղի է ունեցել գաղափարների ընտրության ժողով, որին մասնակցել են համայնքապետարանի աշխատակիցները, բնակավայրերի վարչական ղեկավարները, ավագանու անդամներ և բնակիչներ: Ժողովի ընթացքում քննարկվել են բնակիչների շրջանում նախապես կատարված հարցումների հիման վրա ձևավորված մի շարք գաղափարներ, որի արդյունքում առաջնային են համարվել ոռոգման ցանցի կառուցման ու ձնմաքրման, ձնահեռացման աշխատանքների բարելավման համար անհրաժեշտ ավտոտրանսպորտային միջոցների և կոյուղու մաքրման համար նախատեսված տեխնիկայի ձեռքբերման հարցերը:

Ծրագրի հետ կապված հաջորդ՝ ենթածրագրի ընտրության ժողովը, կայացավ 23.03.2022 թ., որին կրկին ներկա էին համայնքապետարանի աշխատակիցները, բնակավայրերի վարչական ղեկավարները, ավագանու անդամներ և բնակիչներ: Երկար քննարկումների և քվեարկության արդյունքում վերոնշյալ երկու ենթածրագրերից համայնքի համար առաջնային համարվեց Նոր Հաճըն համայնքի համար ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում:

Ծրագրի իրականացման դեպքում համայնքի ներդրումը կկազմի ծրագրի ընդհանուր արժեքի 5%-ը:

Նոր Հաճըն համայնքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, ինչպես նաև Նոր Հաճըն համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գագիկ Մաթևոսյան**

Հավելված
Նոր Հաճըն համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 27-ի
N 39-Ա որոշման

ԿԱԶՄ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 2-ԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ

Դերը նախաձեռնող խմբում	Անուն, ազգանուն	Աշխատավայր, պաշտոն	Որ համայնքը/ բնակավայրն է ներկայացնում	Կոնտակտային տվյալներ
Նախագահ	Գագիկ Մաթևոսյան	Նոր Հաճըն համայնքի ղեկավար	ք. Նոր Հաճըն	0224 4 25 50 (098) 28 77 77
Նախագահի տեղակալ	Հասմիկ Ավետիսյան	Նոր Հաճըն համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ ավագանու անդամ	Մրգաշեն բնակավայր	(094) 41 26 00
Քարտուղար	Էդգար Խամբարյան	Նոր Հաճընի համայնքապետարանի կոմունալ տնտեսություն համայնքային բյուջետային հիմնարկի տնօրեն	ք. Նոր Հաճըն	(043) 00 90 20
Հետադարձ կապի / բողոքներին արձագանքման համակարգող	Նազիկ Մնացականյան	Նոր Հաճընի համայնքապետարանի հաշվապահ	Նոր Գեղի բնակավայր	(93) 54 47 25
Նախաձեռնող խումբի անդամներ	Արման Սմբատյան	Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար	Քարաշամբ բնակավայր	(093) 07 24 84
	Հովհաննես Պողոսյան	Նոր Հաճըն համայնքի ղեկավարի օգնական	Քանաքեռավան բնակավայր	(098) 60 00 68
	Հովհաննես Քամալյան	Քանաքեռավան գյուղի վարչական ղեկավար	Քանաքեռավան բնակավայր	(094) 62 62 71
	Միրեկան Հարությունյան	Մրգաշեն գյուղի վարչական ղեկավար	Մրգաշեն բնակավայր	(093) 27 36 17
	Կարեն Մարգսյան	Նոր Արտամետ գյուղի վարչական ղեկավար	Նոր Արտամետ բնակավայր	(044) 84 08 48
	Արեն Շահբազյան	Գետամեջ գյուղի վարչական ղեկավար	Գետամեջ բնակավայր	(094) 94 44 47
	Արմեն Բաբախանյան	Նոր Գեղի գյուղի վարչական ղեկավար	Նոր Գեղի բնակավայր	(077) 56 71 56
	Մաթևոս Ավագյան	Արգել գյուղի վարչական ղեկավար	Արգել բնակավայր	(093) 41 23 10
	Արշակ Մուրադյան	Քարաշամբ գյուղի վարչական ղեկավար	Քարաշամբ բնակավայր	(094) 09 56 11
	Մարատ Բաղդասարյան	Թեղենիք գյուղի վարչական ղեկավար	Թեղենիք բնակավայր	(093) 41 29 22
	Տաթևիկ Գրիգորյան	Նոր Հաճընի համայնքի տնտեսական զարգացման պատասխանատու	Նոր Գեղի բնակավայր	(077) 30 58 08
	Անահիտ Ավետիսյան	Ակտիվ երիտասարդ խմբի ներկայացուցիչ	Մրգաշեն բնակավայր	(094) 24 52 82